

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Պ. ԲԵՆՅՈՒԽ

ՊՈԼԻՏԵԽՆԻՑԻԶՄԸ  
ՅԵՎ

ՊԻՈՆԵՐՇԱՐԺՈՒՄԸ

371.4

F-49

ԵՏԶՐԱՏ

1 9 3 2

ՅԵՐԵՎԱՆ

71-4  
2-49  
V8

01 MAR 2013

2802-10

Պ. ԲԵՆՏՈՒՆ

ՊՈԼԻՏԵԽՆԻՑԻԶՄԸ

ՅԵՎ

ՊԻՈՆԵՐՇԱՐԺՈՒՄԸ

3003

Ինչ և պայիսեխնիկական դաստիարակությունը յնվ ինչպես կազմակերպել  
արտագրական—աշխատանքային դաստիարակությունը կոլեկտիվում

ՊԵՆՏՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ



Գեահրտաի ապարան  
Դլավիւա 7431 (Ը)  
Հրատար. 2152  
Գատկեր 1085  
Տիրած 5000

Սրբագրեցիմ՝ Ա ՅՈՎՍԱՂ  
Ե. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հանձնված է արտադրութեան 29 մարտի 1932 թ.  
Ստորագրված է ապրիլ 25 ապրիլի 1932 թ.

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Մինչև այժմ պիտներական կազմակերպութիւնը շատ նեղ եր հասկանում արտադրական-աշխատանքային դաստիարակութիւնը — աշխատանք առանձին արհեստանոցներէ չուրջը, սահմանափակ վարժեցում:

Այժմ պիտներ կազմակերպութիւնը, կոմյերիտական և կուսակցական կազմակերպութիւնների հետ միասին, պայքար է սղում պրիտեխնիկական դպրոցի, պրիտեխնիկական դաստիարակութեան ծավալման համար:

Այս դասում մենք ուզում ենք համառոտ կանգ առնել և պատմել կողմարին, ինչ է պրիտեխնիկական կրթութիւնը, ինչպես պետք է հասկանալ, նույնպես և սույց տալ մատչելի, հնարաւոր քայլեր, վորոնք տանում են դեպի պրիտեխնիկական դաստիարակութեան խնդրելուծումը:

Դասում մենք տալիս ենք յերեսունից ավելի աշխատանքի ձևեր արտադրական-աշխատանքային կրթութեան ասպարիղում, վորոնք հիմնականում սղառում են արտադրական տեխնիկական աշխատանքի-այն բոլոր ձևերը, վոր դեռևս չեն արմատացել ամբողջ պիտներական կազմակերպութեան աշխատանքի բովանդակութեան մէջ:

Ի՞նչ է ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Կ.

Հնդամյակի — սոցիալիստական շինարարութեան վիթխարի պլանը — Խորհրդային Միութեան առաջ խնդր է դնում վոր միայն ազատ վել կապիտալիստական կախումից, ալիև կառուցել այնպիսի սոցիալիստական տնտեսութիւն, վորը կարողանա զերազանցել կապիտալիստական յերկրների նվաճումները և ամուր հիմք դնել սոցիալիզմի ծավալման համար ամբողջ աշխարհում:

Մենք մտել ենք մեծապոյն մի շրջան, նորազույն մեքենայի և տեխնիկայի շրջանը: Տեխնիկան դալիս է ծառայելու սոցիալիստական շինարարութեանը, թափանցում է կենցաղի մեջ, աշխատավորների կյանքի բոլոր անկյունները:

Լենինը իր ժամանակին նչել է, վոր սոցիալիստական հասարակութիւն ստեղծելու յերաշխիքը հանդիսանում է միայն և միայն խոշոր արդիւնաբերութիւնը: Նա տտում էր, վոր առանց այդ հիմնական և վճռական պայմանի, սոցիալիզմի մասին խոսք անդամ լինել չի կարող:

Մենք անում ենք անում է բանվորական մասսաների զիտակցութիւնը, կուլտուրականութիւնը: Տեխնիկայի արձուք նույնպես պահանջում է այդ: Մեր պայմաններում, յերբ արտադրութեան տերը հանգիստանում է ինքը բանվորը, պահանջվում է աշխատանքի բոլորովին այլ կուլտուրա: Առաջ բանվորը ամբողջ կյանքի ընթացքում պատրաստում

եր նույն առարկան, կատարում եր ունակութունները կոնկրետ նշանակված մի շրջան, ներդրում եր գլխավորապես նյութերի վրա:

Ներկայումս, մեր անտեսութեան վերակառուցման պայմաններում, կատարելագործվում են մեր գործարաններն ու ֆաբրիկաները: Արտագրական պրոցեսները զնալով ել ավելի ավտոմատանում են: Մենք ասորում ենք մի շրջան, յերբ մարդու կատարած Փուճկցիաները զնալով ավելի և ավելի անցնում են մեքենային:

Բանվորից պահանջվում է գիտենալ վոչ միայն այն, ինչ կատարվում է իր քիթ տակ, վոչ միայն իր անմիջական պարտականութունները նեղ շրջանակը, իր գաղափարը, մուրճը և այլն, մի խոսքով վոչ միայն կոնկրետ առաջադրանքների կատարումը, այլև պահանջվում է իմանալ այն ամենը, ինչ կատարվում է գործարանում, ինչ պրոցեսներ են տեղի աւնենում մյուս գործարաններում, ինչ պրոցեսներ են տեղի ունենում ամբողջ յերկրում: Բանվորը պետք է դառնա արտադրութեան տերը, կազմակերպողը:

Մասինը 16-րդ կուսամասում ասաց, վոր մեր յերկիրը պետք է դաստիարակի ստողը, կենսուրախ մարդիկ, նոր սերունդ, վորը ընդունակ լինի խորհրդային Միութեան գործութունը բարձրացնել պատշաճ բարձրութեան վրա, վորը կարողանա կրճելով պաշտպանել Հոկտեմբերի նվաճումները:

Արդիսի սերունդ մենք կարող ենք դաստիարակել միայն այն պայմանով, յեթե դպրոցի յուրաքանչյուր քայլը կապենք գործարանի հետ, ամեն օր անմիջականորեն աշխատելով պրոլետարական հասարակայնութեան շրջապատում:

Ժամանակին խոսելով սոցիալիստական մրցման մասին ոսցիալիզմի օրով, Լենինը ասել է, վոր սոցիալիզմը վոչ միայն չի մարում մրցումը, այլ ընդհակառակը, նա ասում եր, վոր միայն մեր քաղաքական կարգերի օրով հնարավոր է յերևան բերել այն տաղանդները, վորոնք անսպառ են ժողովրդի մեջ: Մենք պետք է ամեն կերպ ձգտենք, վորպեսզի մեր դաստիարակութունն ապահովի այնպիսի մարդկանց պատրաստումը, վորոնք կարողանան գրավել իրենց տեղը սոցիալիզմի շինարարութեան մեծ ասպարիզում: Մենք պետք է դաստիարակենք բազմակողմանի զարգացած, սոցիալիստական շինարարութեան նվիրված մարդիկ: Առանց պոլիտեխնիկական դաստիարակութեան չի կարելի տեղծել նման փոխարինողներ:

Մեզ մոտ զեկավար-կազմակերպիչ բանվորը աշխատում է իր համար: Առաջ կադիստրիստը ձգտում եր վորքան կարելի յե շատ ոգուտ տանալ բանվորից: այդ նպատակով նա անց եր կացնում բազմատեսակ կատարելագործումներ և նորամուծութուններ: Նա չեր նայում, թե ինչ հետևանք է ունենում այդ, ինչպես է անդրադառնում դադարաչի առաջ աշխատող միլիոնավոր մարդկանց վրա:

Մեզանում բանվորը իրեն է ծառայեցնում տեխնիկան, մեքենան: Մենք պայքարում ենք դիտակից վերաբերմունքի համար ամբողջ աշխատանքում, լինի այդ գաղափարի վրա, կոլտնտեսութեան մեջ, կամ վորեկ այլ տեղ: Ինչպես արդեն նշեցինք, բանվորից պահանջվում է վոչ միայն վարժութուն:

Բանվորը պետք է գիտենա արտադրական պրոցեսները, վորոնք տեխնիկայի զարգացման հետ միասին զնալով բարդանում են: Արտա-

դրական պրոցեսը հանդիսանում է քիմիական, ֆիզիքական, մեխանիկական տարբեր յերևույթների մի ամբողջութուն, և բնականաբար, բանվորը պետք է սովորի վոչ միայն ներդրել նյութերի վրա: Տեխնիկայի զարգացման ներկա շրջանի համար բնորոշ գլխավոր գործիքներին տիրապետելը պարտավորիչ է: Իմանալով պետք է ստանա պոլիտեխնիկական կրթութուն, նա պետք է իմանա ֆիզիկայի, քիմիայի, մեխանիկայի տարբերը, պետք է գիտենա նրանց միջև յեղած կապը, գիտենա արտադրական պրոցեսը ընդհանուր առմամբ:

Մարքը, իր ժամանակին առաջադրելով պոլիտեխնիկական դպրոցի հարցը, պոլիտեխնիզմի հասակացողութունը բացատրում եր այսպես.

«Կրթութուն ասելով մենք հասկանում ենք յերեք բան. 1) մտավոր կրթութուն. 2) ֆիզիքական զարգացում — այնպես, ինչպես տալիս են մարմնամարզութեան դպրոցները և ռազմական մարզանքները, 3) պոլիտեխնիկական դաստիարակութեան, վորը ծանոթացնում է բոլոր արտադրական պրոցեսների գիտական ընդհանուր սկզբունքներին և միաժամանակ յերեխային և պատանուն տալիս է գործնական ունակութուններ բոլոր արտադրութունների տարրական գործիքները բանացնելու մեջ» (I ինտերնացիոնալի 1-ին կոնգրեսի բանաձևից):

Խոսելով պոլիտեխնիկական դաստիարակութեան մասին, Նադեժդա Կոնստանտինովնա Կրուպսկայան, մարքսյան պոլիտեխնիկական դպրոցի ակադամոր հետևորդներից մեկը, այսպես է բնորոշում պոլիտեխնիզմի հասակացողութունը: Նա գրում է, «վոր պոլիտեխնիզմը դասավանդութեան ինչիւր հատուկ առարկա չէ: Նա պետք է ներծծվի բոլոր դիսցիպլինաներում, անդրադառնա նյութերի բնորոշութեան վրա թե՛ ֆիզիկայում, թե՛ բնագիտութեան և թե՛ հասարակագիտութեան մեջ: Անհրաժեշտ է փոխադարձաբար կապակցել այդ ցիսցիպլինաները, ինչպես և կապակցել նրանց պրակտիկ գործունեութեան հետ, մասնավանդ կապել աշխատանքի վարժեցնելու հետ: Միայն նման կապակցումը կարող է պոլիտեխնիկական բնույթ առաջ աշխատանքային դաստիարակութեանը» (Н. К. Крупская «Трудовая политехническая и производственная школа» ГИЗ 1929, стр. 14.

Պրոլետարիաթը, իշխանութունը իր ձեռքը վերցնելով մեր յերկրում, հենց առաջին օրից զնում է խորհրդային աշխատանքային դպրոցում պոլիտեխնիզմի մտցնելու հարցը: Մեր կուսակցութեան ծրագիրը մեր առաջ զնում է հետևյալ խնդիրը. «անց կացնել պարտադիր և ձրի, ընդհանուր և պոլիտեխնիկական կրթութեան (վարը ցանկարացնում է) րեորիայում և պրակտիկայում արտադրութեան բոլոր գլխավոր նյութերի հետ»:

Ինական է, վոր մեր քաղաքական կարգերում վորքան ավելի յե դարդանում տեխնիկան, նույնքան ավելի յայն, ավելի սուր կերպով է դրվում պոլիտեխնիկական դաստիարակութեան հարցը: Ե՛ւ մարխ է, զարգացած տեխնիկայի պայմաններում պոլիտեխնիկական կրթութուն ունեցող կադրեր հարկավոր են նաև կադիստրիզմին, սակայն այնպե՛ս պոլիտեխնիկական դաստիարակութեան ծավալումը տանում է դեպի քաղաքական կարգերի կործանումը, վորովհետև պոլիտեխնիկայեա դաստիարակված բանվորը հասկանում է արտադրութեան պրոցեսները,

հասկանում և նրանց փոխադարձ կապը, հասկանում և շրջապատող կյանքը, հասկանում և, թե ում համար է աշխատում:

Մեզ մոտ, մանավանդ ներկայումս, յերբ մենք հնգամյա պլանը կատարում ենք ավելի կարճ ժամանակամիջոցում յերբ հնգամյակը յե-  
րազ չէ, այլ շոշափելի իրականութուն, յերբ տեխնիկան ծառայում է  
վոչ միայն պրոլետարիատին, այլ աշխարհում չտեսնված չափով մուտք  
և գործում գյուղը, — այժմ ամենասուր կերպով դրվում է պոլիտեխ-  
նիկական դաստիարակության ամենաարագ ծավալման հարցը, վորով-  
հետև նրա թերազնահատումը կարող է արգելակել մեր սոցիալիստական  
շինարարութեան տեմպերը:

Պոլիտեխնիզմը լայն ծավալով կարելի չէ իրագործել միայն ինդուս-  
տրիական շրջապատում դարգացած տեխնիկայի պայմաններում: Սա  
անվիճելի չէ, բայց այդ ամենին չի նշանակում, վոր մենք պետք է  
ուպասենք միևնույն վոր լայն զարգանա տեխնիկան և հետո իրագործենք  
պոլիտեխնիզիզմը:

Իլիչը այդ հարցին ավելի է միակ ճիշտ պատասխանը: Ն. Կ. Կրուպս-  
կայայի թեղիանների առթիվ, վոր նա գրել էր ժողովրդական լուսավո-  
րության հարցերի շուրջը գումարված կուսխորհրդակցության համար,  
և նրանք գրում են. «Ձի կարելի գրել պոլիտեխնիկական կրթության մա-  
տին վերացական կերպով, հետադուր սպառաջի համար»: Իլիչը նշում  
էր, վոր պետք է հաշվի առնել մեր իրականութունը, այն դրությունը,  
վորի մեջ գտնվում է մեր յերկիրը: Նա ասում էր, վոր. «Մենք վոչ մի  
կերպ չենք կարող հրաժարվել հենց պոլիտեխնիկական կրթության  
սկզբունքից և նրա ամենապայք իրագործումից հնարավորութեամբ չա-  
փել»:

Սյս ցուցմունքը ասում է, վոր արտադրական ամեն մի շրջապա-  
տում պետք է գնել պոլիտեխնիզիզմի իրագործման հարցը, վորովհետև  
տեխնիկայի զարգացումը բնականաբար պայմանավորում է պոլիտեխ-  
նիկական դաստիարակության խորութունը, մասսայականութունը,  
բայց այդ չի նշանակում, վոր առանց արդյունաբերական հսկանների,  
առանց կոմբինատների պետք է ձեռները ծալած նստել և սպասել: «Պո-  
լիտեխնիկական դաստիարակութունը վոչ միայն տեխնիկայի առաջա-  
դիմության հետևանք է, այլև ինդուստրացման միջոց: Պոլիտեխնիզիզմը  
պետք է լինի մասսայական, համատարած» — այսպիսի պատասխանն է  
տալիս Ն. Կ. Կրուպսկայան:

Վորքան ավելի արագ է աճում և զարգանում մեր յերկիրը, նույն-  
քան ավելի հաճախակի և բարձր լվում է պոլիտեխնիզիզմի ծավալման  
անհրաժեշտության, միլիոնավոր յերկիսանների մասսաներին նրանով  
ընդգրկելու մասին հնչող ձայնը:

Լուստոգիկամատի վորոշումը Փարիզի յոթնամյակների մատին,  
ժողովրդական լուսավորության հարցերի շուրջը գումարված համա-  
միութենական II կուսխորհրդակցության հսկայական ուշադրութունը  
գնդի պոլիտեխնիզիզմի հարցերը, արտադրական-տեխնիկական արշավը,  
Պոնոնների Կենտրոնական Բյուրոյի անցկացրած պոլիտեխնիկական  
ձեռնարկարար, տեղական և հանրապետական համագումարները պո-  
լիտեխնիզիզմի շուրջը — այս ամենը վկայում է, վոր պոլիտեխնիզիզմը յե-  
րազ չէ, վոր պոլիտեխնիզիզմի հարցը լուծվում է գործնականորեն: Սրա  
հաջողութունը ապահովված է նրանով, վոր այդ գործին լվել են վոչ

միայն մանկավարժները, այլև պրոֆմիութենական աշխատողները,  
տնտեսավարները, կուսակցականները, կոմյերիտականները, յերեխա-  
ների մասսաները և սկսում են կառուցել պոլիտեխնիկական դպրոցը,  
վորովհետև նրան կարիք ունի մեր յերկիրը, վորպես սոցիալիստական  
շինարարության համար կարգեր պատրաստելու բազա:

Բնական է, վոր պոլիտեխնիկական դաստիարակութունը թե՛ ներ-  
կա շրջանում և թե՛ առաջիկա տարիներում կդրավի ամենազլխավոր  
տեղը նաև պոլիտեխնիկական կրթութունների աշխատանքում, վորովհետև  
առանց պոլիտեխնիկական դաստիարակության չի կարելի դաստիարա-  
կել կոմունիստական կարգեր: Կոլվարը պետք է կառուցի պոլիտեխ-  
նիկական դպրոց, կոլվարը պիտի աշխատի իրագործել այն բոլոր  
հնարավոր քայլերը, վորոնք տանում են դեպի պոլիտեխնիզիզմ, թող  
լինի ամենատարակալ, ամենահասարակ, և՛ դպրոցում, և՛ պիտ-  
ներ կոլեկտիվում, և՛ լազերում, և՛ առողջարգման հրապարակում, և-  
կումբներում, բնակկոպներում, ամենուրեք, վորտեղ կան մանկական  
մասսաներ:

### ՊՈԼԻՏԵԽՆԻԶՄԸ, ԴՊՐՈՅԸ ՅԵՎ ԿՈԼԵԿՏԻՎԸ

Մեզ մոտ միևնույն այժմ պիտի կազմակերպության աշխատանքի սխա-  
տեմում յեղել են պոլիտեխնիկական դաստիարակության տարրեր, վո-  
րոնք կան միաժամանակ նաև դպրոցական աշխատանքի սխտեմում,  
տեխնիկական խմբակներ, արհեստանոցներ, երկուրոսիաներ դեպի գոր-  
ծարան, արտադրական աշխատանքին մասնակցելու վորոշ վորձեր — այս  
բոլորը պոլիտեխնիզիզմի տարրեր են: Այս հարցում միևնույն այժմ ման-  
կավարժի և կոլվարի միջև չկա հարկ յեղած չիումը: Յերբ միլիոնները  
խոսեցին պոլիտեխնիկական դպրոցի կառուցման մասին, յերբ արդյու-  
նաբերութունը խոշոր հատկացումներ է անում պոլիտեխնիզիզմը ծա-  
վալելու համար, բնականաբար հարց է ծագում — կարի՞ք կա արդյոք  
առանձին կառուցելու մեր սեփական «պիտեխնիկական պոլիտեխնիկական  
դաստիարակութունը»:

Դպրոցը պետք է դառնա պոլիտեխնիկական պետք է պիտեխնիկական  
կազմակերպության հիմնական ուշադրութունը դարձնել պոլիտեխնի-  
կական դպրոցի համար մղվող սպառաբի վրա, չլստել ուժերը, եներ-  
դիան, ուշադրութունը, հնարավորութունները: Հասկանալի չէ, վոր  
մենք բոլոր ուժերը պետք է ուղղենք դեպի վոչ միայն դպրոցներում սո-  
վորող յերեխաների առավելագույն ընդգրկումը պոլիտեխնիզիզմի մատ-  
չելի ձևերով, և վոչ միայն դպրոցական ձեռնարկումներով: Արտադրա-  
կան աշխատանքային դաստիարակութունը հանդիսանում է պիտեխ-  
նիզիզմակերպության աշխատանքի հիմնական և վճռական գործոնը:  
Բնական է, վոր մենք վոչ մի կերպ չենք կարող դուրս նետել արտադրա-  
կան աշխատանքային կրթութունը պիտեխնիզիզմակերպութունների աշ-  
խատանքի բովանդակութունից և կենտրոնացնել միայն դպրոցում,  
բնական է, վոր անհրաժեշտ է շերտավորում, անհրաժեշտ է ճիշտ  
բաշխում, վորպեսզի սարավելիվ առաջ չգա պոլիտեխնիկական աշխա-  
տանքի ասպարիզում: Մենք պետք է, նորից ենք ընդգծում, վորոնք  
մատչելի քայլեր, լուծելու համար պոլիտեխնիզիզմի հարցը արտադր-  
ամեն մի շրջապատում: Մեր խնդիրն է յերեխաների աչքի առաջ բաց

անել մեր յերկրի սոցիալատական շինարարութեան վիթխարիութեանը, յերեխաներին սպառազինենք ունակութեաններով, ոգնենք նշանք ընա-  
րելու աշխատանքի կոնկրետ բնագոյամաներ մասնակցելու համար սո-  
ցիալատական շինարարութեանը: Անթույլատրելի յե այն դրութեանը,  
յերբ թե՛ պիտենք իր կտրվում, թե՛ դպրոցում կան կազմարարական  
արհեստանոցներ, թե՛ այնտեղ և թե՛ այստեղ կա մեխանիկական ար-  
հեստանոց, թե՛ այնտեղ են սովորեցնում վորոչ արհեստներ, և թե՛ այս-  
տեղ պատրաստում են սնանկատարման արհեստավորներ: Նման դրութեան  
վնասակար և և աններելի:

### ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԱՅՐԱՐԸ ՊՈԼԻՏԵՆԵՆԻՅԻԶՄԻ ՀԱՄԱՐ

Տեխնիկայի ասպարիզում աշխատանքի դիտարկում ձևեր կոնկրետում  
հանդիսանում են խմբակները և մասամբ արհեստանոցները, վորտեղ  
յերեխաները ստանում են ունակութեաններ: Սմբակները դիտարկում  
թերութեանն այն է, վոր նրանց մեջ պակասում է հասարակական-ոգ-  
տակար բովանդակությունը, վոր խմբակները և տեխնիկական արհես-  
տանոցները միջոցով յերեխաներին մասնակցից չենք դարձնում սոցիա-  
լիստական շինարարութեանը, ուղի չենք ցույց տալիս յերեխաներին  
իրենց ձեռք բերած ունակութեանները կիրառելու ոգտակար աշխա-  
տանքում: Առանձին ունակութեանները շուրջը յեղած վարժեցումը  
զնատակար է, տաղտկալի յե յերեխաների համար, նա չի դաստիարա-  
կում, ընդհակառակը, սպանում է յերեխայի ձեռներեցութեանը, ին-  
չկատրվան: Միայն այն ժամանակ աշխատանքը դրավիչ, հետաքրքի-  
կրանա և դաստիարակչական տեսակետից արժեքավոր, յերբ մենք  
յերեխաներին ենք զգնում ուղղում ենք դեպի սոցիալիստական շինարա-  
րութեանը, մասնակցելու այդ շինարարութեանը, կիրառելու իրենց  
ստացած ունակութեանները այդ շինարարութեան մեջ: Վերջենք ո-  
րինակ ուղի-խմբակը կոնկրետում: Աշխատում են ջան-յերեխան  
յերեխաներ և ուղիս ընդունելից զենք չեն դնում, ամիսներով, հուլիսի  
մի տարի ամբողջ մնում են նույն կետի վրա: Յերեխաները չեն զգում  
իրենց աճումը: Յերեխաների հետաքրքրութեանը ուղիս ընդունելից չի  
փոխանցվում դեպի ուղիս ընդունելից, ուղիս չի համաշխարհային  
նվաճումները, նոր կատարելագործումները: Յերեխայի հետաքրքրու-  
թեանը ուղիս ընդունելից չի փոխանցվում դեպի լուսանկարչական ա-  
պարտո, դեպի դիմամոնթենա, շոգեմեքենա, արտոմորիլի մոդել և  
այլ: Յերեխան արաջին շարաթը, ամիսը, զգում է իր աճումը, դիտա-  
ցում է, վոր ստացել է ոգտակար, արժեքավոր ունակութեան, բայց  
զբանից այն կողմը յերեխայի զարգացումը աննկատելի կերպով սահ-  
մանափակվում է խմբակի շրջանակներում:

Գյուտարարութեան ցանկությունը, նորանոր բնագավառներ,  
տեխնիկայի նոր ասպարեզներ վորոնելու ձգտումը — այս ամենը ցան-  
կապատվում է նեղ խմբակայնութեան պատերով, տեխնիկական աշխա-  
տանքի մի նեղ ճյուղի շուրջը յեղած վարժութեամբ:

Մենք պետք է պայքար հայտարարենք զուտ «տեխնիկիզմ» մերի  
ունակութեանների դեմ, վորոնք չեն ծառայում հասարակական-

ոգտակար աշխատանքի: Մենք պետք է յերեխայի հետաքրքու-  
թեանը մոգելից փոխանցենք դեպի մեր վիթխարի կառուցումը:  
Մոդելը սկզբն է, արաջին քայլը վորը տանում է դեպի խորհր-  
դային միութեան մեքենայացումն ուսումնասիրելու հսկայական աշ-  
խատանքը, ուսումնասիրելու տեխնիկայի զարգացումը, վորովհետև  
շոգեմեքենայի, շոգետուրբինի հետաքրքրական մի մոդել, վորը շատե-  
րին թվում է, թե՛ առանձին նշանակութեան չունի, վորմանը համարում  
են միայն խաղալիք, ունի դաստիարակչական հսկայական նշանակու-  
թեան: Չե՛ վոր նույն սկզբունքներով են կառուցված և վիթխարի մե-  
քենան, և փոքրիկ մոդելը:

Ծավալելով նման աշխատանք, մենք կկարողանանք իրոք պատրաս-  
տել մի սերունդ, վորը ընդունակ է ուղի դառնելու, կողմնորոշվելու,  
արտադրութեան մեջ աշխատելու վոր թե՛ հրամանով կամ ցուցմունք-  
ներով, — փոխարինողների այնպիսի մի սերունդ, վորը սովորած է դյու-  
տարարական, կառուցողական հատկութեաններով, վորին այնքան կա-  
րելք ունի մեր յերկիրը: Վոր մի կերպ չի կարելի արտադրական աշխա-  
տանքի ունակութեանները ստացումը կտրել յերեխաների ամենաակալի-  
մասնակցութեանից սոցիալիստական շինարարութեան ասպարիզում:  
Վերցնելով այդ վորպես հիմք, պետք է դառնել աշխատանքի ամենակոն-  
կրետ ճյուղերը պիտենք իր կտրվում և դպրոցում:

### ԱՇԽԱՏԱՆՈՑ

Արտադրական-աշխատանքային դաստիարակութեան կենտրոնը  
պետք է լինի ընդհանուր աշխատանոցը (արհեստանոց): Ընդհանուր աշ-  
խատանոցը կարող է դյութեան ունենալ դպրոցից առանձին կամ դըպ-  
րոցի հետ միասին: Կոնկրետիվ կարող է ոգտադրծել արհեստանոցը  
այն ժամերին, յերբ դպրոցը չի աշխատում այնտեղ:

Ինչո՞ւ արտադրական-աշխատանքային ամբողջ դաստիարակու-  
թեան կենտրոնը լինելու յե աշխատանոցը:

Աշխատանոցը, նրա կազմակերպման մեթոդը չի սահմանափակում  
յերեխայի հետաքրքրութեանը հարցերի նեղ շրջանակում, առանձին մո-  
դելների շուրջը: Աշխատանոցի կազմակերպումը չենք հարված է հասց-  
նում նեղ տնայնագործական սահմանափակություն: Նայեցեք, ինչպես  
է կազմակերպվում վորեք արհեստանոց կամ խմբակ կոնկրետում,  
ծախսվում են հսկայական միջոցներ (կոնկրետիվ հնարավորութեաննե-  
րի համեմատությամբ), գնվում է սարքավորում: Յեթե որինակի հա-  
մար վերցնենք փականագործի արհեստանոցը, ապա նրա սարքավորու-  
մը կնստի մի քանի հարյուր ուրլի: Փականագործական արհեստանոցը  
աշխատանքի ներկա կազմակերպման պայմաններում ընդգրկում է  
10-20 հոգու: Այդ յերեխաները արհեստանոցում սովորում են յերբեմն  
մի տարուց ավելի: Նշանակում է նման արհեստանոցների դռները փակ  
են հարյուրավոր յերեխաների համար, վորոնք վոր մի արտադրական-  
աշխատանքային կրթություն չեն ստանում, այնինչ նույն դրամարով  
կարելի յե սպասարկել մի քանի անգամ ավելի շատ յերեխաների, մի  
կողմից, իսկ մյուս կողմից ավելի ճիշտ կազմակերպել աշխատանքային  
դաստիարակութեանը:

Արտադրական-աշխատանքային դաստիարակութեան կենտրոն  
պետք է դառնան վոր թե՛ նեղ, կողիացած, հասարակական աշխատան-

քից կտրված խմբակները, այլ ընդհանուր (ունիվերսալ) աշխատանոցները, վորոնք ընդգրկում են բոլոր յերեխաներին, որդանապես կապված են պիտաներկադակերպուլթյունների աշխատանքի ամբողջ սխառեմի հետ, հագեցված են հասարակական-ոգտակար գործունեյությամբ, գործնականում լուծում են պոլիտեխնիկական գաստիարակության մասէլի քայլերի խնդրերը:

**ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԱՇԽԱՏԱՆՈՑԸ**

Աշխատանոցի համար պետք է ընտրել մաքուր և լուսավոր շէնք: Աշխատանոցի սարքավորումը պետք է գտնել զանազան միջոցներով: Մի կողմից, կարելի չէ ճարել մեծ քանակութամբ սարքավորում մոտակա գործարանից, վորակց կլինեն ձեռնարկության համար անպետք շատ իրեր: Վերակառուցման, ռացիոնալացման, կատարելագործումների շրջանում շատ հին մեքենաներ հանվում են գործածությունից: Պարզ է, վոր այդ մեքենաները համապատասխան կերպով վերաշինելով, հարմարեցնելով յերեխաներին, կարելի չէ աշխատանոցները սարքավորել մեքենայական սարքավորումով: Հաճախ մենք բավականաչափ կատեգորիկ կերպով շինք պնդում, վոր գործարանը մեզ տա գործածությունից հանված այդ մեքենաները: Պետք է Մորիլիզացիայի յենթարկել պրոֆմիտիենական, կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունները, դրա համար ոգտագործելով նաև ծնողներին:

Աշխատանոցը պետք է տա միջ միայն նեղ ունակություններ — դաս պարտավորիչ է, այլև նա պետք է որդանապես կապվի գործարանի հետ, պետք է հետզհետե յերեխայի հետաքրքրությունը տեխնիկայի մի ճյուղից փոխադրի մյուս ճյուղը, պետք է յերեխային ծանոթացնի գործարանի, ֆաբրիկայի հետ, այն բոլոր պրոցեսների հետ, վոր կատարվում են թե աշխատանոցի սահմաններում, և թե անմիջականորեն գործարանում, ցեխում, այդ պրոցեսներն ուսումնասիրելու միջոցով:

**ԱՇԽԱՏԱՆՈՑԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ**

Աշխատանոցը սարքավորելու համար անհրաժեշտ է ճարել հետևյալ գործիքները և իրերը:

|                                                                                      |   |
|--------------------------------------------------------------------------------------|---|
| 1. Շերխերել . . . . .                                                                | 1 |
| 2. Ռանդա սովորական . . . . .                                                         | 2 |
| 3. Ռանդա կրկնակի . . . . .                                                           | 1 |
| 4. Սղոց միջակ ատամն . . . . .                                                        | 2 |
| 5. Ձեռնասղոց (НОЖОВКА) . . . . .                                                     | 1 |
| 6. Կալավառոտ պերկաներով . . . . .                                                    | 2 |
| 7. Ստամեսկա տափակ զանազան . . . . .                                                  | 2 |
| 8. Ստամեսկա $\frac{3}{8}$ , $\frac{3}{4}$ , $\frac{1}{2}$ , $1\frac{1}{2}$ . . . . . | 4 |
| 9. Գոլտո . . . . .                                                                   | 1 |
| 10. Ուարտոց . . . . .                                                                | 1 |
| 11. Ռաչպիլ . . . . .                                                                 | 1 |
| 12. Աքցան հյուանի . . . . .                                                          | 1 |
| 13. Ռեյսմուս . . . . .                                                               | 1 |
| 14. Կլեյանկա . . . . .                                                               | 1 |
| 15. Մեթր ծալովի . . . . .                                                            | 1 |
| 16. Անկյունաչափ (մալկա) և յերունոկ . . . . .                                         | 2 |

|                                                          |          |
|----------------------------------------------------------|----------|
| 17. Կացին . . . . .                                      | 1        |
| 18. Ստորբոցիակա . . . . .                                | 1        |
| 19. Յիրկուլ . . . . .                                    | 1        |
| 20. Մախաթ հյուանի . . . . .                              | 1        |
| 21. Կիանկա . . . . .                                     | 1        |
| 22. Ապակեթուղթ (չկուրկա) զանազան համարների . . . . .     | 5 թերթ   |
| 23. Մորիլիա . . . . .                                    | 500 դրամ |
| 24. Ներկ և բաք զանազան գույնի . . . . .                  |          |
| 25. Ագաթթու . . . . .                                    |          |
| 26. Մծմբաթթու . . . . .                                  |          |
| 27. Նաչարիլ կտորով . . . . .                             |          |
| 28. Սմպաաիչ թուղթ (наждачная бумага) . . . . .           |          |
| 29. Հղկաքար (наждак) փոշի . . . . .                      |          |
| 30. Կոպրարի շրջանակ (рамка копировальная) . . . . .      | 1        |
| 31. Սեղմիչ (ТИСКИ) զուգահեռական . . . . .                | 1        |
| 32. Լհեմելու (գողելու) զամպ կամ պրիմուս . . . . .        | 1        |
| 33. Ձողիչ (պայալնիկ) . . . . .                           | 1        |
| 34. Չաքուջներ զանազան . . . . .                          | 2        |
| 35. Կարկին . . . . .                                     | 1        |
| 36. Կրոնցիբիուլ . . . . .                                | 1        |
| 37. Նուարոմետր . . . . .                                 | 1        |
| 38. Անկյունաչափ (ուզոլնիկ) մետաղե . . . . .              | 1        |
| 39. Մետեր ծալովի . . . . .                               | 2        |
| 40. Չուբիլո . . . . .                                    | 1        |
| 41. Կերներ . . . . .                                     | 1        |
| 42. Բարադոկ . . . . .                                    | 1        |
| 43. Պսուտակահաններ (ատվերակա) . . . . .                  | 2        |
| 44. Բանայի շվեդական . . . . .                            | 1        |
| 45. Դրել ծակիչներով . . . . .                            | 1        |
| 46. Վինտովայնի տախտակ . . . . .                          | 1        |
| 47. Կլուպիկ մետալիկներով . . . . .                       | 1        |
| 48. Պլոսկոզուբցի . . . . .                               | 2        |
| 49. Կրուզլոզուբցի . . . . .                              | 2        |
| 50. Ուարտոզուբցի . . . . .                               | 2        |
| 51. Ուարտոցներ զանազան . . . . .                         | 5        |
| 52. Ուարտոց սրբելու խոզանակ . . . . .                    | 1        |
| 53. Բրուսոկ (հեռան) . . . . .                            | 1        |
| 54. Յուզաման . . . . .                                   |          |
| 55. Լուսանկարչ. թասեր (վաննոչկա) ապարատի չափով . . . . . | 4 հատ    |
| 56. Լապտեր կարմիր ապակով . . . . .                       | 1        |
| 57. Մենդուրկա 250 խոր սանա . . . . .                     | 1        |
| 58. Կոպիայի շրջանակ . . . . .                            | 1        |
| 59. Ստանոկ նեգատիվներ չորացնելու համար . . . . .         | 1        |
| 60. Չարաֆին . . . . .                                    |          |
| 61. Նկրատ . . . . .                                      | 1        |
| 62. Վալիկներ կլեյի և ներկի համար . . . . .               |          |
| 63. Քս նոն միլիմետրներով . . . . .                       | 2        |

|                                  |   |
|----------------------------------|---|
| 64. Անկյունաչափի փայտե . . . . . | 1 |
| 65. Մանտիմետր . . . . .          | 1 |
| 66. Դանակ կաղամբարի . . . . .    | 1 |
| 67. Մկրատ մետեղի . . . . .       | 1 |

Աշխատանոցում պետք է դանդաղ ամեն տեսակի հարցարաններ (սպրավոչներ) դժադրություններ, սխեմաներ, մոդելներ, վորոնք անհրաժեշտ են յերեխաներին այս կամ այն կոնկրետ առաջադրանքը կատարելու գործնական աշխատանքում: Աշխատանոցում կենտրոնացվում է տեխնիկական դրականությունը, տեխնիկական դրադարան: Յերեխաները զանազան թերթերից քաղված քննարկներով հավաքում են տեխնիկայի բոլոր նորությունները:

Աշխատանքի համար նյութեր հեշտությամբ կարելի չէ դանդաղ դործարանի ավելցուկները: Յերեխաները մասամբ կարող են բերել տնից: Յեթե դործարանում փոչ մի կերպ չի կարելի դործիքներ ձարել, ապա պետք է դիմել այլ միջոցների, որինակ փոխ վերցնել յերեխաներից, ծնողներից կամ դրամ հավաքել դործիքների գնման համար, կաղամբարներով յերեխաներ, վիճակակազեր, ստանալով հատկացումներ դործարանային, պրոֆիտթեմնական և այլ կաղամակերպություններից:

Աշխատանոցները որդանական մի մասը պետք է լինեն շարժական արկղները, կամ այսպես ասած շրջիկ հրահանդիչները: Աշխատանոցի ղեկավար-կոնսուլտանտը հեշտությամբ կարող է չեմոզանի մեջ հավաքել դործիքների մի մասը, գնալ այն յերեխաների մոտ, վորոնք չեն կարող դալ չդիտեն ուր է դանդաղ աշխատանոցը, դնալ ծայրամասերը, բանտորական տները և այլն:

Գործիքները անպայման պետք է պահել պահարանում: Վտանգավոր նյութերը (բենզին, նավթ, սպիրտ և այլն) պետք է պահել մի ուրիշ սենյակում կամ տեղում, դժբախտ դեպքերից խուսափելու համար:

Գործիքներ մասամբ կարելի չէ ձարել նաև կամավոր ընկերությունների — ասդիոյի բարեկամների, Ավտոդորի, Պաշտ-Ավիաբիմի բլիթներից:

Աշխատանոցի որդանական մասը պետք է լինի նաև մի փոքր դեղատուն: Աշխատանոցում պետք է պահպանել ստողապահական կանոնները — ոճառ, յերեսարբիչ:

Գործիքների պատասխանատվությունը պետք է դնել մեծ յերեխաների խմբի վրա, վորոնք աշխատանքից առաջ և հետո պետք է ստուգեն գործիքների թիվը:

Ներքևում տալիս ենք աշխատանոցի սարքավորման մի այլ վարկանատ, վոր ավելի կժաման, ավելի մատչելի չէ տեղական կոլեկտիվների համար և մոտավոր հաշվով արժեքն դնում ենք 76 ր. 67 կ.:

ՍԱՐԲՍՎՈՐՄԱՆ II ՎԱՐԻՍՆՏԸ

|                                                        |    |    |
|--------------------------------------------------------|----|----|
| 1. Սեղմիչ ( ТИСКИ ) սեղանի 1 հատ . . . . .             | 14 | —  |
| 2. » ձեռքի՝ 1 հատ . . . . .                            | 3  | 77 |
| 3. Սարտոց դրաչելի 10 տերան . . . . .                   | —  | 98 |
| 4. Սարտոց լիչնոյ 10 . . . . .                          | 1  | 10 |
| 5. Պայալնիկ 1/2 քառ. թունավոր թթու և նաշաղիր . . . . . | 6  | —  |

|                                                |    |    |
|------------------------------------------------|----|----|
| 6. Դրել սպիրայաձև, ծակիչներով . . . . .        | 4  | —  |
| 7. Սարտոց կլոր, դրաչելի . . . . .              | 1  | 25 |
| 8. Կերն հասարակ . . . . .                      | —  | 50 |
| 9. Չաքուչ 1 ֆնդանոց . . . . .                  | —  | 50 |
| 10. Չաքուչներ 1/2 ֆնդ. 2 հաս . . . . .         | —  | 80 |
| 11. Նոժովիկ մետաղի համար չաքուչներով . . . . . | 8  | —  |
| 12. Չուրիչ 1 հատ . . . . .                     | —  | 50 |
| 13. Պլաստիկուրցի . . . . .                     | 2  | 15 |
| 14. Պտուտակահան (ատվերտիկա) . . . . .          | —  | 50 |
| 15. Մկրատ մետաղի համար . . . . .               | 3  | —  |
| 16. Յիրկուլ սղեղով . . . . .                   | 1  | 75 |
| 17. Ռանդա հասարակ . . . . .                    | 1  | 25 |
| 18. Նոժովիկ փայտի համար . . . . .              | 2  | 40 |
| 19. Կարավարոտ սրտորոն և ցենտուր . . . . .      | 10 | 50 |
| 20. Ստամեկա 3/8, 1/2, 3/4, 1 1/2 . . . . .     | 3  | —  |
| 21. Կլեյանիկ փոքր . . . . .                    | 2  | —  |
| 22. Աքյան . . . . .                            | 1  | 40 |
| 23. Մետր ծալովի . . . . .                      | 1  | —  |
| 24. Կլիանիկ 1 հատ . . . . .                    | —  | 70 |
| 25. Անկյունաչափ փայտե . . . . .                | —  | 30 |
| 26. Ռեոմոս . . . . .                           | —  | 76 |
| 27. Հեսանաքար . . . . .                        | 2  | —  |
| 28. Բարատոկ . . . . .                          | —  | 50 |
| 29. Մկրատ դերձակի . . . . .                    | 1  | 50 |
| 30. Մանտիմետր . . . . .                        | —  | 10 |

Գումար 76 ո. 67 կ. \*)

Ամեն մի կոլեկտիվ յերբ ցանկանա կարող է սարքավորել նման աշխատանոց: Ներկա պայմաններում, յերբ լայն ծավալում է տեխնիկան և պահանջ է դրվում տեխնիկական զինել նոր սերունդը, անթե կոլեկտիվի համար մնալ առանց արտադրական բազայի, առանց աշխատանոցի: Արդեն այժմ ակնհայտ է, թե վորքան ձեռնտու չէ կոլեկտիվին սարքավորել մի աշխատանոց և փոչ թե մի շարք բաղձատեսակ տիվին սարքավորել մի աշխատանոց: Առանձին-առանձին ավելի թանգ են նստում, քան խմբակներ, վորոնք առանձին-առանձին ավելի թանգ են նստում, քան մի աշխատանոցի սարքավորումը և չեն տալիս հարկ յեղած արդյունքը:

Աշխատանոցի վարիչը կարող է լինել ղեկավարը կամ պրոֆիտթեյան միջոցով ներգրավված վորակալ բանվորը, կոմյերիտականը, վոր ավարտել է ֆարգործուսը, ոտղի բարեկամները ընկերության, Ավտոդորի, Պաշտ-Ավիաբիմի ակտիվ անդամ և այլն: Միայն պետք է համապատասխան կերպով պատրաստել նրան և ցույց տալ աշխատանքի կաղամակերպման սկզբունքները: Աշխատանոցներում, բնակատանքի, յարբար, յերեխաները չեն կարող ամիսներով, նույնիսկ մի ամբողջ տարբար, յերեխաները չեն կարող ամիսներով, նրանց հետաքրքրությունը տարի դրաղվել միայն ոտղիորդունիչով, նրանց հետաքրքրությունը կուղղել դեպի արդամթիվ մոդելներ, բաղձատեսակ նախագծեր, վորոնց վրա աշխատում են նրանք: Անկավարը, յերբ տեսնում է, վոր յերեխա-

\*) Գնեք մտավոր են. տես «Труд техника»

ների հետաքրքրութիւնը սառչում և, կանգ և անում վորոշ մտքեր-  
ների, վորոշ առարկաների հանդէպ, կարող և շուտով նրանց հետա-  
քրքրութիւնն ուղղել դեպի տեխնիկական ստեղծագործութեան այլ ու-  
ղիւղումներ: Յերեխաները ընդհանուր աշխատանոցում շինելով ելեքտրա-  
կան դանդակ, ռադիոընդունիչ, սետք և ծանոթանան հյուանութեան,  
